

Ի նանիբ մնորութիւն յաշխարհ զբստուերն իւր արկանէ ,
 Յարեակ ծայրակարմիր գիտես փոխել զու զխոր գիշեր :
 Հանճար մնորուտ ըստ մեր կարէ ական տնկանել .
 Մասնըդ քո մեզ զերկնից ցուցանիցէ զուղին ուղիւ ,
 Եւ , ի զեղմունս առատահոս զերագոյակ քում բարութեանդ ,
 Ի ճտկատ մահկանացուաց փայլեսցիս դու ինքըն շողող :

Թրգմն. Հ. Արսէն Դազիկեան

ԲԻՁ

ՎԵՍՏԵԱՆ ԿՈՅՍ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՊ

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ո Յ Ա Ռ Ա Ջ Ի Ն Դ Ա Ր Ո Ւ

(Տես Հտ. ԾԳ ԴԷՂ 463)

ԳԼՈՒԽ Թ

ՍԵՔՍՏՈՍ ՍԱԲԻՆՈՍԻ ՊԱՐՏԷՋՆԵՐՆ



ԱՍՆ ՈՒՀԻՆ Գ օրէ 'ի վեր Սեքս-
 տոս իւր Վիմինալի վրայ ունեցած
 պարտէզները գնացած էր : Իւր վերջն
 բոլորովին առողջացեր էր , և այլ ևս
 Դոմիտիանոսի կատաղութենէն չէր վա-
 խեր , փաւիոս Էղեմեսէն իմացած ըլլալով՝
 թէ Պարթենոս ազատագիրն առողջանալէն
 յետոյ ըսած էր , թէ կարող չէ ճանչնալ
 այն երկու մարդիկը՝ որ Պալատինեան կա-
 մըրջին մօտ իրեն վրայ յարձակած էին :

Սեքստոսի ամարանոցի պերճութիւնն աւ-
 բող հարստութիւնը կը յայտնէր , իւր աղբիւրնե-
 րով , հսկայական արձաններով , և թանկագին
 մարմարիոններով՝ որ կը զարդարէին մեծ
 խնամով պահուած ծառամէջ ճեմելիները :
 Ազնուական պատրիկն թէպէտե Յանիուլոն
 բլրոյն կողերուն վրայ ուրիշ շքեղ բնակարան
 մ'այլ ունէր , սակայն զայս աւելի սիրելով՝
 միշտ հոս կը բնակէր , և յաճախ խնձոյց և
 հանդիսից հրաւիրելով իւր բարեկամները , զինք

շրջապատող հացկատակաց հետ կը վառներ
 իւր ճոխ սաացուածքը :

Առաւօտն կառուիս ծագած էր , և սակայն
 Սեքստոս զեռ անկողնոյն վրայ տարածուած ,
 աչերը տնկելին ոսկեղօծ կամարին վրայ սե-
 ւեռած և բազկները խաչաձև հանգուցած
 զանգրահեր գլխոյն վերեւ , մերթ կը ժպտէր և
 մերթ կ'այլալլէր : Կը մտածէր փլորոնիայի
 վրայ որուն հետ կը փափաքէր ամուսնանալ :
 Սակայն իւր ազնուականութիւնն արգելք էր
 իրեն՝ այնպիսի ստորին վիճակի կին մի հարս-
 նացնել իրեն . բաց աստի այն աղջկին , որ
 իւր հաւաքին հաւատարիմ մնալու համար
 այն սարսափելի մահը բանի տեղ չէր դրած ,
 արգեօք պիտի ուզէր իրեն փեսայ ընդունել
 մեծաշուք և աշխարհաւէր Սեքստոսը : Յետ
 լաւ մտածելու այս բանիս վրայ՝ անկողնոյն
 մէջ նստաւ , ծափահարեց . և յետոյ իբր թէ
 այս շարժումէն յոգնած՝ զարձեալ տարածուե-
 ցա :

Հոսովայեցւոց մեղկ և կնասս սովորութեանց հետեանքներէն մին էր ծաւալութիւնն, այս պարուս մէջ՝ յորում չէին գտնուեր ոչ կիներիննաստուս և ոչ Մարիոս. ասկայն Սեբաստոսի համար կրնար ներելի բլլալ, մանաւանդ երբ մտածենք, որ իւր վիրաց պատճառած հիւանդութենէն դեռ հազիւ կազդուրած էր:

Պատրկին ծափաձայնէն նուրիացի գերի մը ննջարանը մտնելով՝ յարգանքով մէջտեղը կեցաւ: Սեբաստոս առանց անոր նայելու և հետը խօսելու, մատը վեր վերցուց. այս ձևով հասկցուց նա՝ թէ կ'ուզէր ելնել անկողնէն: Գերին շուտով զուրս ելաւ և վերադարձաւ երկու ծառայներով, որոց մին նուրբ ասուեայ պարեգօտ մը՝ կամ մանաւանդ վերաբերու մը կը բերէր, զոր պատրիկն անկողնէն զուրս ելնելու ժամանակ պիտի հագնէր. իսկ միւսն արծաթեայ անօթ մը լի մեղրախառն տաք գինով:

Սեբաստոս առաւ քանի մը կաթիլ և նըստաւ անկողնոյն եզերքը՝ օաքերն ընձառիծծաւ մորթի մը վրայ դնելով, մինչդեռ գերիներն զինքը լայն վերարկուս կը ծածկէին: Յետ աւարտելու զայս, տարին զինքը գաղջ ջրոյ լողաբարձը, որ էր փոքրիկ սենեակ մի՝ ճեղմակ մարմարեայ պատերով և յատակաւ, ուր լոյսն ներս կը թափանցէր կամարին մէջ զլուսնուած փոքրիկ երկաթեայ վանդակէ մը, որ բնաւ չէր արդելուր օդը՝ գաղջ և հոտաւեալ գոլորշիներուն մէջ պտուտելու: Պատին քով մարմարեայ աւազան մը շինուած էր, որուն ջրոյն պղնձի շարժուն ծորակէ մը կը հոսէր:

Սեբաստոս մտաւ աւազանին մէջ, քանի մի վայրկեան կեցաւ և յետոյ դուրս ելաւ. գերիներն զինքը դարձեալ ննջարան տարին. անոնցմէ մին՝ արջու ճաքպէ և կնդրկէ բաղկացեալ նիւթով օծեց պատրկին մարմինը և սպիտով մաքրեց զայն:

Հոն պատրկին մէկ ժամէ աւելի անշարժ կեցաւ անկողնոյն մէջ, այն գաղջ ջրոյ լուսնալուսնէն յատկէ եկած անուշակ քնոյ մէջ ինկզմամբ. յետոյ ելաւ, հագաւ կտաւէ կամ թրգէ պարեգօտը որ Հոսովայեցւոց շապկի տեղ կը ծառայէր, և հոսակ նայալ զգեցաւ՝ մինչև սրունից կէսը իջնող ասպետական եր-

կայն պատմանանը, որոյ թեզանիքներն մինչև արմուկները կը հասնէին, և զօտով մը մարմնոյն հետ սեղմուած էր, բայց ոմանք զայն գնելու աշխատութիւնը յանձն չէին առնուր, թէպէտեւ այդ անհոգութեան և ծուլութեան նշան մ'էր:

Ջարգարանաց վերջանալէն յետոյ Սեբաստոս պարտեղ իջաւ և երկար ժամանակ շրջեցաւ վարդենաստորգերէ շինուած ճեմելոյ մի մէջ, որոնց թանձրախիտ ճիւղերն զլոյսն վերև կանաչ գմբէթ մը կը ձևացնէին: Յետոյ նստաւ աղբեր մի եզերքը, որոյ ջուրը կը հոսէր Պարոսի մարմարինէն շինուած ծովային հրէշի մը բերնէն. յետոյ ձեռքերը աւազանին մէջ սուզելով, ճեմելոյն զեղիին աւազը ջրելով զուարճացաւ:

Այս տղայական զօսանքն ալ զինքը շուտով ձանձրացնելով, սկսաւ մտածել. առաջին անգամ իւր մտաց մէջ ներկայացաւ. և զաղտնի ձայն մը իրեն կ'ըսէր՝ թէ ծերունայն հիւրասիրութեան փոխարէն ինք մեծ ապեւրախութիւն կը ցուցնէր:

Սեբաստոս եպիկուրեան դաստիարակութիւն առած ըլլալով՝ մոլորած էր. և թէպէտ սրտին մէջ ազնիւ զգացումներն թմրած էին բայց չէին մարած, և կրնային դուրս նորոգուիլ. այլ զժրաղիւսարք իւր արտաւոր սովորութիւնները՝ տկարացած հոգին դիպաւ կը յաղթահարէին: Այն զգացումներն եղան որ իրեն ազդեցին այս բառերը, զորս զլուսն խոնարհեցնելով ըսաւ.

— Չեմ ուզեր չարիք հասցունել այն ծեր նազովրեցւոյն. ընդհակառակն ինձ համար ըրած ամէն բարեաց երախտահատոյց պիտի բլլամ: Գալով փլորոնիայի, չեմ ուզեր որ իւր խեղճ բնակարանին մէջ երկար հեծէ. կ'ուզեմ երկանկացնել զնա և կեանք վայելել տալ. որովհետեւ թշուառութեան մէջ անցուցած կեանքը ցաւապիկ կերպով մեծնալ մ'է. կ'ուզեմ զնա հարստացնել, և վարձատրել գծերունին՝ իւր եղբորորդոյն բարեգործութիւններ ընելով:

Եւ անմիտը կը խնկար. և անա նուրիացի գերին ներս մտաւ, իմացնելով որ չորս երիտասարդ ասպետներ կը փափաքին զինքը տեսնել:

— Բարեկամներս են, որ կ'ուզեն իմա- նալ՝ թէ արդեօք ինչպէս եմ, ըսաւ ։

Եւ հրամայեց ծառային որ զիրենք տանի կանաչագարդ կաղնույ անտառակ մի, որոյ երկու խաչաձև ճանապարհաց զիրար կտրող տարածութեան մէջ զրած էին սեւա մարմա- րիոնէ շինուած սեղան մը, որ շրջապատեալ էր դահաւորակի ձեւով քարէ նստարաններով ։

Սեքստոս ալ հոն գնաց՝ սպասելու իւր բարեկամաց որ նուրբացի գերայն առաջնոր- դութեամբ քիչ մը վերջը եկտն ։ Պատրիկն մօտեցան որ ի նշան ողջունի ձեռքը շրթանց տարաւ ։

— Ձքեզ մեռած կը կարծէինք, և շատ դարմացած էինք յուզարկաւորութեանդ հան- դիսին հրաւիրուելուս համար, ըսաւ առնոց- մէ միմ զուարթ կերպով ։

— Ինչո՞ւ համար, Պուրլիոս ։

— Որովհետեւ տասնուհինգ օրուան մէջ տեսն անգամ մեկանք՝ զրանդ զարկինք, և ծառայներդ միշտ մեզ պատասխանեցին թէ բացակայ եմ ։

— Հոս էի, բայց թերափներուն գոհ մա- տուցանելու համար ինձ հարկ էր առանձին մնալ ։

— Որո՞նք են քու թերափներդ, Սեք- ստոս, հարցուց երիտասարդներէն մին ձեա- ցնելով թէ հաւատաց անօր պատճառանաց ։

— Ինչ լաւ հարցումն. այն ատուածու- թիւնը զոր ճշմարիտ եպիկուրեան մը պարտի յարգել, պատասխանեց Սեքստոս՝ կուշա մը ծիծաղելով ։

Ապետներն ալ իրեն հետեցեան. սակայն ամենամեծն իսկոյն իւր զուարթապէմ կերպա- րանքն առնելով՝ ըսաւ ։

— Որովհետեւ եպիկուրեան ազանդին վրայ կը խօսիս, քեզ կ'ըսեմ որ կայսրը Հռովմէն վճռեց ամէն ազանդոց փիլիսո- փայները. մենք ալ քու մասին լուր մը չու- նենալով, կարծեցինք թէ զքեզ ալ անոնց կարգէն համարած էր ։

— Արդեօք ինչ է ասոր պատճառը, հարցուց Սեքստոս հետաքրքրութեամբ ։

— Անշուշտ Դոմետիա կայսրուհւոյն ան- հաճոյ եղան, ըսաւ ծաղրածութեամբ պատ- րիկներէն մին ։

— Ի՞նչ, աղաղակեց ուրիշ մը սարսափած չորս կողմը նայելով. ինչքդ կորուսեր ես, որ այդ կերպով կայսեր կնոջ վրայ կը խօ- սիս. ծառերը կրնան ականջ ունենալ և ար- քունեաց զէմ մեղադարտ հրատարակել զքեզ ։

— Ազատութեամբ կրնաք խօսիլ հոս, վրայ բերաւ Սեքստոս իմ ծառայք եթէ ձեր խօսակցութիւնը լռէին իսկ աւելի լաւ կը հաճա- րէին մեռնիլ՝ քան թէ ձեր խօսքերուն մէկը յայտնել ։ Այդ խօսիքը դարձեալ փիլիսո- փայից վրայ ։ Եւրեմն սաճյոք է թէ կայսրը զանոնք աքսորեց ։

— Այո՛, շնականք, սկեպտիկեանք, եւ պիկուրեանք, ստոյիկեանք և պիլատագրեանք վճռուեցան Հռովմէն. ուրեմն զգուշացի՛ր դու՝ Սեքստոս. որովհետեւ կարծեմ քիչ մը փիլիսոփայութենէ սեղեակ ես ։

— Յետէն Արամեզայ, փիլիսոփայու- թիւնը կ'արհամարհեմ. ճշմարիտ է՝ թէ ես Եպիկուրոսի հետեւելով զիրքը միանեղէն կը նախադասեմ. բայց գալով փիլիսոփայից, շատ հոգ չեմ ընդեր. և եթէ կայսրը զանոնք վճռե- տելը յարմար գտեր է, ես կարծեմ թէ աշխարհս բաւական մեծ է զանոնք ընդու- նելու համար, և համագումար եմ՝ թէ լաւ գիտեն անոնք ամեն սեղ կենցաղավարելու կերպը ։

— Իրաւունք ունիս, ըսաւ ամենէն եւ- րիտասարդն ։ Այս առաւտ Պուրլիոսի գնա- ցած ժամանակս Դիոնեսիոս Ոսկեբերանի հանդիպեցայ, որ ինձ ըսաւ՝ թէ Դակիացոց քով պիտի տպաւինի, և թէ Հռովմէն հե- ուս՝ Պղարտոնի տրամախօսութեանց կամ Դե- մոսթենի հրապարակախօսութեան մին կար- գալով՝ պիտի միխիմուրի ։

— Դոմիտիանոս ոչ միայն փիլիսոփայից զէմ հալածանք հանեց, յարեց Պուրլիոս, այլ նաև Հրէից, որ թերեւ ամենէն աւելի հալածեալներն են, որովհետեւ տուրք չեն վճարած. նոյնպէս և տեսակ մի մարդոց զէմ, որ Նազոդիթեցի կը կոչուին ։

Այս խօսքերը լսելով Սեքստոս, զսղաց փլորոնիայի համար ։

— Ապահով ես, Պուրլիոս հարցուց ան- հաստատ ձայնով ։

— Շատ տպահով և եթէ կ'ուզես հա-

մոզուի, յիշ՛ ինչ որ տեսանք այնչափ անգամ Հոովմայ կռուանոցի մէջ. այս թշուառականները, որ վայրենի անասուններէ կը բզկտուէին և կը մեռնէին երգեր երգելով, իբր թէ աստիճանութեան երթային: Բայց ինչ ըսես: Ժերակոյսը միայն օովորական ունով կը գործէ և ուրիշ բան չի մտածեր: Իսկ Դոմիտիանոս ամէն օր մահուան կը դատաւարտէ այնպիսի քաղաքացիներ, որ հայրենեաց այնքան ծառայած են. և բաւական չհամարելով հանճարն և փիլիսոփայութիւնն արտօրելը, կը հայածէ նաև այն ամէն ինչ որ սքանչացում կը պատճառեն. և ռակայն պատրիկները և ժողովուրդը կը լռեն:

Կը խոստովանիմ՝ թէ փիլիսոփայից վրայ ամենին չեմ խղճար. շատ անգամ մտաց մէջ շփոթութիւն ձգած են իրենց զայրացեալ կռիւներով, որոնց պատճառը եղած են այնպիսի տղայական անմտութիւններ, զորս իրենք իսկ չեն հասկնար. աւելի կը ցաւիմ նազովեցեաց վրայ՝ որ աճմեղ և խաղաղաւէր անձինք են, և չարեաց փոխաբէն բարիք կը հատուցանեն, ըսաւ Սեքստոս՝ Անիկետոսի և Փլորոնիայի վրայ մտածելով:

Յանուն Արամազդայ, կը խնդրեմ անոնց մասին ինձ հետ մի խօսիր, ըսաւ պատրիկներէն մին:

Քրիստոնէից գէմ ըրած վիճաբանութիւնը դեռ պիտի շարունակէր բայց խանգարուեցաւ, երբ գերիները զինի, նուշ և ձիթապտուղ բերին: Սեքստոս հրաւիրեց իւր բարեկամները որ զովանան, յետոյ տապեղուունքը

ներկայացուց. ոմանք զանոնք օդոյ մէջ նետելով սկսան տղաղակել. « լին կամ դատարկ » իսկ ոմանք սեղանէն քիչ մը հեռանալով՝ սկսան այն ռամկական խաղը որ կը կոչուի « Մատնեխաղ »:

Սեքստոս խաղցողաց ամենին ուշ չէր դներ: Հաւթեամբ սեղանին կռթնած, իւր դիմաց վրայ մասնաւոր տխրութիւն մի պատած էր: Իւր բարեկամաց բերած լուրը՝ զինքը տաղանապի մէջ խորասուզած էր. կը մտածէր թէ Փլորոնիա կրնար վայրկեանէ վայրկեան ամփիթատրոն տարուիլ. կը մտածէր թէ այլ ևս չիկար սուերամարտն Պարթս՝ զնա տաղաւելու համար. այս խորհուրդն զինքն այնչափ կը տանջէր, որ մտքէն կ'անիծէր երիտասարդ պատրիկներն՝ որոնց զուարթ ձայներն իւր մտածութիւնը կը խանգարէին: Հուսկ ապա խաղերնին դադրեցուցին և եկան ողջունելու զՍեքստոս, որ իւր շնորհակալութիւնքն յայտնեց ընդունած այցելութեան համար, և մինչև պարտեզին ելքն իրենց հետ գնաց: Երբ մինակ մնաց, դարձաւ դափնեաց ճեմելոյն մէջ պտտելու. յետոյ իւր ննջարանը գնաց, և նուրբացի գերւոյն հրամայեց՝ որ ըստ կաւելոյն շուտ պատրաստէ զահաւորակ մը:

Քանի մի վայրկեան յետոյ կակուղ բարձեռու վրայ ընկողմանեալ՝ կը տարուէր դէպ ի Ալլական Բաղտի տաճարն, և զահաւորակը հոն թողլով՝ միայնակ գնաց Անիկետոսի բնակարանը:

(Շարայարեծի)

